Շուշանիկ Կուրղինյան

Նամակ Հովհաննես Մալխասյանին

23 հունվարի, 1907 թ.
Ռոստով-Դոն
Հարգելի պ. Հովհ. Մալխասյան.

Ուրախ եմ թերթիդ հաջողվելուն: Ցանկանում եմ ուժ և տոկունություն այդ վսեմ ասպարեզում՝ որը հանդիսանալու է մի բուռն կեղծված և հարստահարված թշվառների <համար> որպես մի մտավոր փարոս, որպես գաղափարական նեցուկ:

Որպես բարեկամ, թույլ եմ տալիս ինձ Ձեզ խորհուրդ տալու, որ թերթը այնպիսի հիմքերի վրա դնեք, որ չլինի «ոտքերը-կապած, ձեռքերը-շղթա...»: Կյանքի և մտքի այժմյան տեմպերամենտի պահանջները լա՛յն են... ազա՛տ, ըմբոստ... ուստի քիչ թե շատ, այսպես թե այնպես նորածին թերթը պիտի ձևվի նրանց չափերին համեմատ, հարմար:

Խուսափեցեք նեղ, սահմանափակ տենչերից, շատ լոզունգների հետ, որոնք Ձեր սրտին մոտ են, դրեք և այս «Пусть будут все живущие существа свободны от страданий...»:

Վերջապես քաջ եղեք, հառաջ տարեք առանց վհատվելու խոչընդոտներից:

Հարգանոք՝
Շուշանիկ Կուրղինյան